Արձանագրություն N 3
Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/5 ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 31.05.2021թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝
- Գայանե Գևորգյան

Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող աշխատակազմ
- Հայարփի Շահինյան
- Արամայիս Մկրտչյան

Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԲԱ բացող աշխատակազմ
- Ռիմա Աբրահամյան
- Լիաննա Աբելյան

Քարտուղար՝ Մերի Մկրտչյան

Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո:

31.05.2021թ., ժամը 15:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

«ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Մկրտչյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Մ. Մկրտչյան)

1.1 Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/5 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել.

Հ/հ	Մասնակից	ՀՎՀՀ	Հեռախոսահամար	Էլ. հասցե
1	ԱՁ Սեյրան Սևոյան	47759998	+374 94 582 210	sevoyanseyran@gmail.com
2	«ԱՅ ԻՔՍ-ԹԵՔ» ՍՊԸ	01243618	+374 93 199 389	ixtech20@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Մ. Մկրտչյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների **Armeps (www.armeps.am)** համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

2.3 Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են պայմաններին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքի՝

Գնահատող հանձնաժողովը «ԱՅ ԻՔՍ-ԹԵՔ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

ներկայացված առաջարկվող ծառայության դիմում-հայտարարությունում (Հավելված 1)՝

- սխալ է նշված հարկ վճարողի հաշվառման համարը, 1 նիշ պակաս է:

Վերոնշյալով պայմանավորված՝ անհրաժեշտ է Ձեր կողմից ներկայացված դիմում հայտարարությունում նշել ԱՅ ԻՔՍ-ԹԵՔ ՍՊԸ-ի ճիշտ ՀՎՀՀ-Ն՝ 01243618:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «ԱՅ ԻՔՍ-ԹԵՔ» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

02.06.2021թ., ժամը 10:00-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ «ԱՅ ԻՔՍ-ԹԵՔ» ՍՊԸ -ի կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները և վերջինիս հայտը գնահատեց բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Մ. Մկրտչյան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի անվանումը	Արժեք /իքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար/	ԱԱՀ	Ընդհանուր գին ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐ՝ 1 հավելվածների ծրագրային ապահովման մշակման ծառայություններ		
	Նախահաշվային գինը՝ 10 000 000		
ԱՁ «Սեյրան Սևոյան»	6 690 000	-	6 690 000
«ԱՅ ԻՔՍ-ԹԵՔ» ՍՊԸ	9 099 000	-	9 099 000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Ըստ ներկայացված տվյալների մասնակիցներն ԱԱՀ վճարող չեն:

3.4 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0:

4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Մ. Մկրտչյան)

4.1 Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից կազմակերպված ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/5 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվում ԱՁ «Սեյրան Սևոյան»-ն:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից կազմակերպված «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն սահմանվում է 5 օր անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Մ. Մկրտչյան)

5.1 «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Մ. Մկրտչյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Մկրտչյան)

7.1 «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ն, ք.Երևան, Մհեր Մկրտչյան 5 հասցեում՝ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Գ. Գևորգյան
հանձնաժողովի անդամներ՝	_____	Հ. Շահինյան
	_____	Ա. Մկրտչյան
	_____	Ռ. Աբրահամյան
	_____	Լ. Աբելյան
հանձնաժողովի քարտուղար՝	_____	Մ. Մկրտչյան